



AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

Center for
Responsible Mining

Հանքարդյունաբերության օրենսդրության
բարեփոխման նախաձեռնություն

Աշխատանքային փաստաթուղթ 2
Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ
փաստաթղթերի շարք

Մաքրում, վերականգնում և հանքի փակում

Դոկտոր Վլադո Վիվոդա

Քուինզլենդի համալսարան

Կայուն հանածոների ինստիտուտ

Հանքարդյունաբերության ոլորտում սոցիալական
պատասխանատվության կենտրոն

Դոկտոր Ջոնաթան Ֆուլչեր

Քուինզլենդի համալսարան

Թ.Ս. Բիրնի անվան իրավաբանության բաժին

Փետրվար 2017

mlri.crm.aua.am

Մաքրում, վերականգնում և հանքի փակում

Վլադո Վիվոդա և Ջոնաթան Ֆուլչեր (2017)

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք

Աշխատանքային փաստաթուղթ 2

Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն,

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն

Հիմնաբառեր` Հանքարդյունաբերություն, Պատասխանատու, Հայաստան, Մաքրում, Վերականգնում, Հանքի փակում, Անվտանգություն

Փաստաթղթերի շարքի և ՀՕԲՆ-ի մասին

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի այս շարքը պատրաստվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն» (ՀՕԲՆ) ծրագրի շրջանակներում: ՀՕԲՆ-ը հնարավոր դարձավ **Թուֆենկյան» հիմնադրամի** ֆինանսական աջակցության շնորհիվ, նախաձեռնության նպատակն է երաշխավորել, որ հանքարդյունաբերությունը երկրին և տեղական համայնքներին տրամադրի բավարար օգուտներ: Նախաձեռնության նպատակներից է մշակել և Ազգային ժողովի խմբակցություններին ներկայացնել այնպիսի օրինագծեր, որոնք կավելացնեն հանքարդյունաբերության տված հասարակական և տնտեսական օգուտները և միաժամանակ կնվազեցնեն շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա ունեցած բացասական ազդեցությունները: ՀՕԲՆ-ի գործունեության գլխավոր առանցքը քաղաքացիական հասարակության, շահերի պաշտպանության խմբերի, գիտական հաստատությունների և համապատասխան ազգային ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունն ու գործընկերությունն է: ՀՕԲՆ-ը համագործակցում է գործադիր և օրենսդիր մարմինների հետ` օրենքների նախագծերը ԱԺ-ում անցկացնելու համար: Ավելին իմանալու համար այցելեք` <http://mlri.crm.ava.am>:

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի մասին

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՀԱՀ ՊԿԿ) հետազոտական աշխատանքի, կրթության և շահերի պաշտպանության միջոցով նպաստում է Հայաստանում սոցիալական, բնապահպանական և տնտեսական առումով պատասխանատու հանքարդյունաբերության` աշխարհում հայտնի լավագույն փորձի յուրացմանը, փոխանցմանն ու հարմարեցմանը: Այս նպատակին հասնելու համար ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը կներգրավի բոլոր շահագրգիռ կողմերին` բնապահպանական խմբերին, ֆինանսական հաստատություններին, հանքարդյունաբերության ոլորտի, քաղաքացիական հասարակության և պետական կառույցների ներկայացուցիչներին: Ավելին իմանալու համար այցելեք` <http://crm.ava.am>:

Ինչպես հղում անել այս զեկույցին

Վիվոդա, Վ. և Ֆուլչեր, Ջ. (2017): Մաքրում, վերականգնում և հանքի փակում (Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք, Աշխատանքային փաստաթուղթ 2, Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն), ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն: Հայաստանի ամերիկյան համալսարան (Երևան, Հայաստան): Ներբեռնված է հետևյալ էլ. հասցեից` <http://mlri.crm.ava.am>:

Ներածություն

Հանքի փակումը կատարվում է, երբ օգտակար հանածոն գործող հանքում սպառվում է կամ հանքարդյունաբերական գործունեությունն այլևս չահավետ չէ: Նախքան հանքի փակման մասին պահանջների սահմանումը՝ 1970-ական թվականներին հանքերը հաճախ պարզապես լքվում էին առանց պատշաճ կերպով փակվելու կամ ռեկուլտիվացվելու: Հանքարդյունաբերական ընկերությունների կողմից բաց և ստորգետնյա արդյունահանման նպատակով օգտագործված հողի վերականգնումը մանրազնին կարգավորում է պահանջում: Որպեսզի համակարգը լինի արդյունավետ, հաշվետվողական և հարմարավետ ու օգտագործողին հարմար /user friendly/, պարտավորությունները և ընթացակարգերը պետք է օրենսդրության մեջ հստակորեն սահմանված լինեն: Բացի այդ, վերականգնման գործընթացը պետք է լինի հնարավորինս թափանցիկ, օգտակար խորհրդատվությունների միջոցով նպատակ ունենալով ապահովել հաշվետվողականություն շահագրգիռ կողմերի համար և հատկապես այն համայնքների համար, որոնց կենսապայմանները կախված են հանքավայրի հաջող վերականգման և փակման գործից:

Առկա իրավիճակը Հայաստանում

Ընդերքօգտագործման իրավունքի համար դիմումը պետք է իր մեջ ներառի հանքի փակման պլանը, որը պետք է դառնա հանքարդյունաբերական պայմանագրի մաս և ընդգրկի հետևյալը. ենթակառուցվածքների, մեքենասարքավորումների և շինությունների ապամոնտաժում, հողի ռեկուլտիվացման պլան, աշխատուժի վրա սոցիալական հետևանքների մեղմացման պլան, մշտադիտարկման պլան և հանքի վերջնական փակման պլան, որը պետք է հաստատվի գործունեության նախատեսված ավարտից երկու տարի առաջ:¹

Ընդերքի մասին օրենսգիրքը ունի հստակ դրույթ հանքի փակման պլանի իրականացման համար ֆինանսական երաշխիքներ ընդգրկելու մասին: Սա առնչվում է ՇՄԱԳ օրենքի դրույթների հետ՝ կապված ռեկուլտիվացման և հանքի փակման համար գնահատման ծախսերի և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարված վճարումների մակարդակի հետ, որի հաշվեկշիռը 2015թ-ի վերջին կազմել է 2մլն ԱՄՆ դոլար: Վճարումները կարգավորվում են կառավարության՝ «Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգի» մասին Ն-1079 որոշմամբ: Պայմանագրի ստորագրումից հետո պետք է կատարվի նախնական վճարումը, որը պետք է լինի գնահատված ընդհանուր գումարի ոչ պակաս, քան 15%-ը: Հետագա տարեկան վճարները

¹ Համաշխարհային բանկ (2016թ), [Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment](#), ապրիլ, էջ 35:

հաշվարկվում են ընդհանուր գնահատված արժեքի մնացած մասի և նախատեսված ռեկուլտիվացման աշխատանքների ժամանակաշրջանի հիման վրա:²

Միջազգային լավագույն փորձ

Հանքի փակման միջազգային լավագույն փորձը պահանջում է նախապես կատարվող պլանավորում, փակման պլանների ինտեգրում հանքարդյունաբերության ողջ փուլերի ընթացքում և փակումից հետո, ֆինանսական երաշխափներ և ռեկուլտիվացման մասին դրույթներ:

Հանքի փակման պլաններ

Լավագույն փորձ ունեցող տարածքներում հանքավայրի հողատարածքների ռեկուլտիվացման և փակման պլանները պահանջվում է ներկայացնել նախքան ընդերքօգտագործման թույլտվության տրամադրումը, հաճախ որպես շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի բաղադրիչ մաս: Նշված պլանները սովորաբար լինում են հանքավայրին հատուկ և ընդգրկում են մանրամասներ առ այն, թե ինչպես է հանքարդյունաբերող ընկերությունը փակելու հանքավայրը, ինչպես է իրականացվելու շրջակա միջավայրի պաշտպանությունը և թե ինչպես է հանքավայրը վերադարձվելու նախապես պլանավորած օգտագործման համար ընդունելի վիճակի: Կապված տեղանքից՝ հանքը կարող է նպատակաուղղվել այլ օգտագործման համար կամ վերադարձվի գործածության իր նախկին ուղղությամբ: Հանքավայրն այլ գործածության պատրաստելու համար անհրաժեշտ է իրականացնել հանքի փակման չորս տարբեր, բայց սերտորեն առնչվող քայլեր.

- *Մաքրում.* աղտոտված տարածքը անվտանգ մակարդակի բերելն է, աղտոտիչ նյութերի հեռացման կամ մեկուսացման միջոցով:
- *Ռեկուլտիվացում.* տեղանքի ֆիզիկական կայունացում, կանաչապատում, հողի վերին շերտի վերականգնում, հողի վերադարձը արդյունավետ գործածության:
- *Վերակառուցում.* հանքավայրում նախքան շահագործումը գոյություն ունեցած էկոհամակարգի վերակառուցում:
- *Վերականգնում.* Կայուն, ինքնաբավ էկոհամակարգի ստեղծում, սակայն ոչ անպայմանորեն նույն համակարգը, որը եղել է նախքան հանքարդյունաբերական գործունեության ծավալումը:

Դեպքերի մեծ մասում ամբողջական վերակառուցումը կարող է անհնար լինել, սակայն մաքրման և վերականգնման հաջող աշխատանքները կարող են հանգեցնել արագ ստեղծվող, գործուն էկոհամակարգի: Չկատարվող շատ պարտավորություններ արդյունք են անցյալի և ոչ ներկա կարգավորումների ծախողման:

² Նույն տեղում, էջ 37:

Ֆինանսական երաշխիքներ

Լավագույն փորձ ունեցող տարածքներում կանոնակարգող մարմնի կողմից ֆինանսական երաշխիքները պահանջվում են, որպես երաշխավորություն այն մասին, որ հանքի փակման համար անհրաժեշտ գումարները առկա կլինեն այն դեպքում, եթե հայտ ներկայացնողը կամ շահագործողը ի վիճակի չէ իրականացնել նախապես պլանավորված փակման աշխատանքները: Հիմնական ծախսերն ու պատասխանատվություններն ի հայտ են գալիս, երբ շահագործման եկամուտը նվազում է և չկան բավարար միջոցներ դրանց համար: Այս դեպքում եթե կանխիկ միջոցներ չեն առանձնացվել կամ շահագործողը չունի բավարար կորպորատիվ ռեսուրսներ, ապա փակման աշխատանքների համար ֆինանսներ չեն լինի: Նույն կերպ ապրանքային գների հանկարծակի անկումը կարող է հանգեցնել ընկերության վճարունակության նվազմանը և հանքավայրի չնախատեսված լքմանը: Ֆինանսական երաշխիքների մասին պահանջները ուղղակիորեն ազդում են ծախսերի վերականգնման և շրջակա միջավայրի մաքրման աշխատանքների վրա: Լավագույն փորձ ունեցող վայրերում ֆինանսական երաշխիքները սահմանվում են յուրաքանչյուր դեպքի համար առանձին՝ ներառելով հանքի մաքրման աշխատանքների ողջ ծախսը:

Ֆինանսական երաշխիքների մեխանիզմների մասին որոշումը կարող է լարվածության պատճառ հանդիսանալ կառավարության և հանքարդյունաբերող ընկերությունների միջև: Կան այդ մեխանիզմների մի քանի տեսակներ, սկսած կոշտ մեխանիզմից՝ անվտանգ և ծախսատար, այդ թվում՝ կանխիկ դեպոզիտ կամ դեպոզիտի վկայագիր, վստահության կամ ռեկուլտիվացման հիմնադրամներից, մինչև թեթև մեխանիզմներ՝ էժան և ռիսկային «հավաստիացումներ»: Կան նաև այլ մեխանիզմներ, ինչպիսիք են (1) երաշխիքի կամ վերականգման պարտատոմս (լավագույն փորձ ունեցող վայրերում ամենատարածված մեխանիզմն է), (2) ակրեդիտիվ, (3) ապահովագրություն (բավականին հազվադեպ պատահող և չստուգված մեխանիզմ)³ և (4) երրորդ կողմից՝ այդ թվում՝ մայր ընկերության կողմից տրվող երաշխիք:⁴

Վերականգնման պարտատոմսերը ֆինանսական անվտանգություն են ապահովում նախքան հանքարդյունաբերական գործունեության ծավալումը՝ նպատակ ունենալով երաշխավորել վերականգման աշխատանքների իրականացումը իշխանությունների կողմից այն դեպքում, եթե շահագործողը չկարողանա կատարել իր պարտավորությունները: Պարտատոմսերի համակարգերը կարելի է դասակարգել

³ Ապահովագրական վկայագրերը ներկայացվում են որպես վերականգնման պարտատոմսեր: Ապահովագրական գործիքները զարգացվում են ԱՄՆ-ում և Հարավաֆրիկյան հանրապետությունում, սակայն շարունակում ունենալ ցածր կիրառություն:

⁴ Այս մեխանիզմների շուրջ մանրամասների համար տես՝ James M Otto, 'Global Trends in Mine Reclamation and Closure Regulation' in Jeremy P. Richards (ed.), *Mining, Society and a Sustainable World* (Springer-Verlag Berlin Heidelberg, 2009), էջ 251-288, հնարավոր է գնել այստեղ՝ <http://www.springer.com/us/book/9783642011023>.

հետևյալ կերպ՝ (a) վճարել նախապես կամ աստիճանաբար, (b) երաշխավորել նախատեսված մաքրման աշխատանքների ծախսերը: Գոյություն ունեն շատ տարբեր տեսակի պարտատոմսային պայմանավորվածություններ, իսկ այժմ կա միտում պարտատոմսերը հասցնելու 100%-ի՝ ներառելով փակման հետ կապված ողջ ծախսերը: Թեև շատ տարածքներ պարտատոմսեր չեն պահանջում, նրանք շարունակում են պահպանել դրա իրավունքը:

Վերականգման իրական արժեքը ներկայացնելու նպատակով պարտատոմսերի խիստ համակարգի պահպանանումը արժեզրկվել է որոշ տարածքների կողմից:⁵ Ոլորտում առկա դիմադրության պատճառով պարտատոմսերի դեմ կայացվող որոշումները հաճախ հիմնվում են այն ընկալման վրա, որ պարտատոմսերը խոչընդոտ են հանդիսանում ներդրումների համար, քանի որ ֆինանսական միջոցները սառեցվում են նոր ծրագրեր մշակելու մեջ ներդնելու և այդպիսով ոլորտի աճը /և տնտեսությունը/ խթանելու փոխարեն: Պարտատոմսերի համակարգը նաև քննադատում են, քանի որ այն ամբողջությամբ չի հոգում հանքերի փակման ծախսերը:

Որպեսզի հնարավոր լինի ապահովել իրական ծախսերի ողջ ծածկումը պարտատոմսի կողմից, անհրաժեշտ է (a) ստեղծել մի համակարգ, որը կարող է ճշգրտորեն հաշվարկել հանքի փակման ծախսը, (b) տարեկան կտրվածքով ուսումնասիրել և վերանայել այդ հաշվարկը՝ հաշվի առնելով իրականացվող գործունեության փուլերը կամ պահանջների չկատարումը, և (c) օրենսդրորեն սահմանել, որ բոլոր հանքերը պետք է ունենան հանքի փակման իրական ծախսի 100%-ին համարժեք պարտատոմս:

Որոշ իրավական համակարգերում՝ որպես կանխավճարային ֆինանսական երաշխիքների կամ պարտատոմսերի այլընտրանք, կամ ի հավելումս դրանց, կիրառվում են ֆինանսական ապահովման կամ այլ տեսակի ապահովման միջոցներ, այն դեպքերում, երբ Էկոլոգիական պատահարը մոտավորապես է կամ արդեն իսկ տեղ է գտել (օրինակ՝ Յունգարիա և Էստոնիա): Եվրոպական Միության շատ անդամ պետություններում, այդուհանդերձ, Էկոլոգիական վնասի ազդակիր հողատարածքի նկատմամբ որևէ զանձումներ կամ այլ տեսակի ապահովման միջոցներ չեն թույլատրվում: Փոխարենը, այդ երկրները պահանջում են վճարումներ կամ ֆինանսական (ի տարբերություն՝ փաստաթղթավորվածի) ապահովում (օրինակ՝ Ֆրանսիայում):

Կանադա

Կանադայում հանքի փակման և ռեկուլտիվացման պարտավորությունները պահանջում են հանքի փակման պլանի պատրաստում և ներկայացում նախքան

⁵ Օրինակ, Քունիզլենդ, Ավստրալիա: Տես՝ https://www.csr.uq.edu.au/publications?task=download&file=pub_link&id=753.

հանքարդյունաբերական աշխատանքների մեկնարկը: Դաշնային, նահանգային և տարածքային բոլոր իշխանությունները ըստ համապատասխան օրենսդրության ապահովում են վերականգնման աշխատանքների ֆինանսական երաշխիքներ այն պարագայում, եթե հանքը շահագործողը դա չի կարողանում անել:⁶ Բոլոր տարածքները պահանջում են փակման պլանների ներկայացում, փակման ծախսերի գնահատում և հանքի փակման համար ֆինանսական երաշխիքի տրամադրում իշխանությանը նախքան բուն հանքարդյունաբերական աշխատանքների մեկնարկը:⁷

Շարունակաբար քննարկվում են ռեկուլտիվացման առաջադիմական պարտավորություններ: Գումարի չափի հաշվարկման մեթոդը և ֆինանսական երաշխիքների ընդունելի ձևերը (օրինակ՝ ակրեդիտիվ, պետական պարտատոմսեր, կանխիկ դրամ, հանքի ռեկուլտիվացման վստահության հիմնադրամներ) տարբերվում են՝ կախված տվյալ տարածքից: Եթե հանքարդյունաբերող ընկերությունը հայտարարում է սնանկության մասին նախքան հանքի փակումը, կանոնակարգող մարմինը կարող է օգտագործել անվտանգության դեպոզիտը՝ հոգալու վերանորոգման, պահպանման, մաքրման և հանքավայրի փակման ծախսերը: Եթե հանքարդյունաբերող ընկերությունն իրականացնում է պատշաճ մաքրում և ռեկուլտիվացում, ապա ֆինանսական անվտանգության դեպոզիտը վերադարձվում է այդ ընկերությանը:

Հարավաֆրիկյան Հանրապետություն

Հարավաֆրիկյան Հանրապետության օրենսդիր մարմինը մշակել է մեխանիզմներ՝ խթանելու ընկերությունների կողմից հանքի փակման և վերականգնման հուսալի կառավարումը: 2002թ-ի Հանքարդյունաբերական և նավթային ռեսուրսների մշակման ակտը (ՀՆՌՄԿ) հանքարդյունաբերական իրավունք ունեցող բոլոր ընկերություններից պահանջում է առանձնացնել վերականգնման համար նախատեսված ֆինանսական երաշխիք, որը կվերադարձվի նրանց՝ կանոնակարգող մարմնի կողմից փակման վկայագրի տրամադրման դեպքում: ՀՆՌՄԿ-ի նպատակն է ապահովել շրջակա միջավայրի վերականգնման համար անհրաժեշտ միջոցների հասանելիությունը՝ անկախ հանքարդյունահանող ընկերության ֆինանսական իրավիճակից, քանի որ ընկերությունից որպես հանքարդյունահանման իրավունքի տրամադրման պայման, պահանջվում է առանձնացնել «ֆինանսական պահուստ»: ՀՆՌՄԿ-ն այս ֆինանսական պահուստը ապահովելու համար թույլատրում է կիրառել չորս մեթոդ. կանխիկ դեպոզիտ, երաշխավորություն, ապահովագրություն կամ հաստատված վստահության հիմնադրամ: Այն դեպքում, երբ ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունը

⁶ Կանադական վարչական տարածքներում հանքի փակման ռեկուլտիվացման աշխատանքների համար ֆինանսական պարտադիր երաշխիքների համար տես՝ <http://www.eisourcebook.org/cms/Canada%20Provinces%20Environmental%20Protection%20re.%20Mine%20Closure%20&%20Reclamation.pdf>.

⁷ Տես՝ <http://www.fasken.com/en/getting-the-deal-through---mining-2015--canada/>

չի կարողանաում իրականացնել շրջակա միջավայրի կառավարում և/կամ վերականգնում, ապա կառավարությունը կարող է այդ գումարը օգտագործել նշված նպատակով:⁸

Չանքի փակման կամ հանքարդյունաբերական գործունեության դադարեցման համար կառավարությունը պահանջում է ներկայացնել փակման վկայագրի համար դիմում: Փակման վկայագիրը կարող է տրամադրվել, եթե փակման պլանը և բնապահպանական ռիսկերի մասին հաշվետվությունը ներկայացված են և կատարվել է շրջակա միջավայրի բավարար վերականգնում: Փակման վկայագրի համար դիմումն ուղղվում է նախարարին: Ընդերքօգտագործման իրավունք ունեցողը շարունակում է պատասխանատվություն կրել ցանկացած բնապահպանական, աղտոտման կամ եոկոլոգիական վատթարացման համար մինչև նախարարի կողմից փակման վկայագրի տրամադրման պահը: Վկայագրի տրամադրումը ընդերքօգտագործման իրավունք ունեցողին թույլ է տալիս վերադարձնել ֆինանսական պահուստի մի մասը, եթե շրջակա միջավայրը հասցվել է ընդունելի վիճակի: Փակման վկայագրի տրամադրման պահից դադարում է գործել ֆինանսական պահուստ պահելու պարտավորությունը, թեև թաքնված կամ մնացորդային բնապահպանական հետևանքների պարագայում կառավարությունը կարող է դրա որոշ մասը պահել փակված հանքի վերականգման նպատակով:

Չետախուզական աշխատանքներ իրականացնելու և հանքարդյունահանման իրավունք ունեցող ընկերությունը և ընդերքօգտագործման թույլտվություն կամ պահպանման թույլտվություն/retention permit/ ունեցող ընկերությունը պարտավոր է դիմել փակման վկայագրի համար հետևյալ դեպքերում՝

- Տվյալ իրավունքի կամ թույլտվության ուժը կորցրած լինելու, հրաժարվելու կամ չեղարկվելու դեպքում
- Ուսումնասիրման կամ հանքարդյունահանման աշխատանքների դադարեցման դեպքում
- Ուսումնասիրման ենթակա տարածքի որևէ հատվածից հրաժարում, որի համար տրամադրվել է թույլտվությունը
- Ընդերքօգտագործման իրավունքով կամ թույլտվությամբ սահմանված փակման պլանի իրականացում:⁹

Արևմտյան Ավստրալիա

Սկսած 2010թ-ից՝ Չանքերի ու նավթի գործակալությունը /ՅՆԳ/ սկսեց Արևելյան Ավստրալիայում հանքի փակման հետ առնչվող կարգավորման և քաղաքականության

⁸ Տես՝ http://awsassets.wwf.org.za/downloads/wwf_mining_8_august_low_res.pdf:

⁹ Տես՝ <http://www.bowman.co.za/FileBrowser/ArticleDocuments/Getting-the-Deal-Through-Mining-2013.pdf>.

շրջանակների բարեփոխումներ: 2012թ-ին Արևելյան Ավստրալիայի /ԱԱ/ կառավարությունն ընդունեց *Հանքարդյունաբերական վերականգնման ֆոնդի ակտը*:¹⁰ Սրա նպատակն էր սահմանել տարեկան վճար *1978թ-ին ընդունված հանքարդյունաբերության մասին ակտի* տակ ընկնող բոլոր տեղամասերի վրա՝ հիմնվելով փչացված հողատարածքի մակերեսի վրա:

Համակարգը պահանջում է տարեկան վճար փոխանցել հանքարդյունաբերական վերականգնման ֆոնդ /ՀՎՖ/: Այս վճարը տեղամասը տնօրինողին չի ազատում իրենց հանքավայրերը պատշաճ կերպով վերականգնելու պարտավորությունից: Սույն վճարներից կազմված ֆոնդի գումարները կարող են օգտագործվել իրականացնելու վերականգնման աշխատանքներ այն հանքավայրերում, որտեղ վերականգնման աշխատանքներ ապահովվելու բոլոր այլ տարբերակները սպառվել են: ՀՎՖ-ն կամավորության սկզբունքով սկսեց գործել 2013թ-ի հուլիսի մեկին, իսկ ուղիղ մեկ տարի անց դարձավ պարտադիր: ՀՎՖ-ն փոխարինեց ոչ պայմանական պարտատոմսերի համակարգին, որը համարվում էր, որ պատշաճ կերպով չէր կարողանում երաշխիք ապահովել կառավարությանը հանքի լքման պարագայում վերականգնում իրականացնելու համար:

ՀՄՖ-ի իրականացումը հաջողված օրինակ է ԱԱ-ի համար:¹¹ Այս ֆոնդ կատարված մուտքը տեղամասեր տնօրինողներին հնարավորություն տվեց վերադարձնել տարածքների դիմաց տրված պարտատոմսերի գումարները: Առաջին տարում վճարների կամավոր մուտքերի արդյունքում հավաքվեց 7 մլն ավստրալական դոլար և վերադարձվեց 280 մլն դոլարի գումար պարտատոմսերից: ՀՄՖ պարտադիր գործունեության առաջին տարում հնարավոր եղավ հավաքագրել լրացուցիչ 26 մլն դոլար, իսկ այդ երկու տարիների ընթացքում վերադարձվել են 1 մլրդ ավստրալական դոլարի չափ պարտատոմսերի գումարներ՝ այդպիսով տնտեսության մեջ զգալի միջոցների մուտք ապահովելով:

2015թ-ին հրապարակված զեկույցը ներկայացնում է ՀՄՖ նախապատմությունը և դրա զարգացման փուլերը և բացատրում է դրա հաջողություն որոշ պատճառներ:¹² Գլխավոր շարժիչ ուժը եղել է ոլորտի կողմից ցուցաբերվող հզոր աջակցությունը, հատկապես այնպիսի կազմակերպություններից, ինչպիսիք են Հանածոների և էներգետիկայի

¹⁰ Տես՝ <http://www.dmp.wa.gov.au/Environment/Mining-Rehabilitation-Fund-MRF-4906.aspx>. ՀՎՖ մասին 2012թ. ակտի համար տես՝

[https://www.slp.wa.gov.au/pco/prod/FileStore.nsf/Documents/MRDocument:25925P/\\$FILE/Mining%20Rehabilitation%20Fund%20Act%202012%20-%20\[00-d0-03\].pdf](https://www.slp.wa.gov.au/pco/prod/FileStore.nsf/Documents/MRDocument:25925P/$FILE/Mining%20Rehabilitation%20Fund%20Act%202012%20-%20[00-d0-03].pdf), ՀՎՖ 2013թ կանոնակարգումների համար տես՝

[https://www.slp.wa.gov.au/pco/prod/FileStore.nsf/Documents/MRDocument:25780P/\\$FILE/Mining%20Rehabilitation%20Fund%20Regulations%202013%20-%20\[00-c0-03\].pdf](https://www.slp.wa.gov.au/pco/prod/FileStore.nsf/Documents/MRDocument:25780P/$FILE/Mining%20Rehabilitation%20Fund%20Regulations%202013%20-%20[00-c0-03].pdf).

¹¹ ՀՎՖ համար տես՝ <http://www.dmp.wa.gov.au/documents/ENV-MEB-382.pdf>

¹² Տես՝ http://www.dmp.wa.gov.au/Documents/Environment/MRF_The_First_Two_Years.pdf

պալատը և Հանքարդյունաբերական և հետախուզական ընկերությունների ասոցիացիան:

Վերականգնողական աշխատանքների պարտավորության արժեքի հաշվիչ գործիքը թույլ է տալիս տեղամասեր տնօրինողներին գնահատել վերականգնում իրականացնելու համար իրենց պատասխանատվության և դրանց կից ՀՎՖ վճարի չափը:¹³ Այս հաշվարկը նաև թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես է հնարավոր կրճատել այդ վճարը տեղամասում խախտումների վերականգման աշխատանքներ իրականացնելու միջոցով: Հաշվիչը տրամադրում է պարտավորության չափի մասին գնահատական՝ հիմնվելով տեղի ունեցած խախտման չափի ու տեսակի և տեղամասում իրականացված վերականգնողական աշխատանքների ծավալի վրա: Սա թույլ է տալիս տեղամասը տնօրինողին ներգրավվել գործունեության առանձին տեսակներում, օրինակ՝ ճանապարհներ կամ ՊԱԿ-եր, կամ տարբեր տեսակի գործունեություններ միավորել մեկ՝ «Հանքարդյունաբերական գործունեություն» տեսակի մեջ: Հաշվիչը կարող է օգնել տեղամասը տնօրինողին չափել հետագա վերականգնողական աշխատանքների կամ ընդլայնված շահագործման աշխատանքների հավանական ազդեցությունը ՀՎՖ վճարի հաշվարկման վրա:

Ֆոնդը կարող է նաև օգտագործվել լքված հանքավայրերի վերականգման համար, որոնք ԱԱ-ում 10,000-ից ավել են: ՀՎՖ-ից ստացված տոկոսները կարող են օգտագործվել ԱԱ-ի ժառանգություն դարձած լքված հանքավայրերը: Բարեփոխումները նպատակ են ունեցել կառավարել և վերականգնել լքված հանքավայրերը:¹⁴ 2016թ-ի հունվարին ԱԱ կառավարությունը հրապարակեց *Լքված հանքավայրերի մասին քաղաքականությունը*, որը նպաստում է լքված հանքավայրերի առաջնահերթությանը, կառավարմանը և/կամ վերականգնմանն առնչվող որոշումների կայացմանը:¹⁵

ԱԱ կառավարությունը լքված հանքավայրերը սահմանում է որպես «նախկինում հանքարդյունաբերական գործունեությունից տուժած հողատարածքներ, որոնց վերակազմման համար որևէ անհատ, ընկերություն կամ կազմակերպություն պատասխանատու չէ»: Նման տեղանքները կարող են կազմված լինել բազմաթիվ տարածքներից կամ հանքավայրի կառույցներից (հանքահորեր, լցակույցտեր, լքված սարքավորումներ), որոնք ոչ միշտ կարող են լինել միմյանց հարևանությամբ:¹⁶

¹³ Տես՝ <https://ace.dmp.wa.gov.au/ACE/Public/MrfRleCalculator/RleCalculator>

¹⁴ Լքված հանքերի ծրագրի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տես՝ <http://www.dmp.wa.gov.au/Environment/Abandoned-Mines-15518.aspx> և http://www.dmp.wa.gov.au/Documents/GEMG_presentation_on_the_Abandoned_Mines_Program_-_18_May_2016.pdf

¹⁵ Լքված հանքերի քաղաքականության համար տես՝ http://www.dmp.wa.gov.au/Documents/Environment/Abandoned_mines_policy.pdf

¹⁶ Տես՝ http://www.dmp.wa.gov.au/Documents/Environment/Abandoned_mines_policy.pdf, էջ 5:

Հանքարդյունաբերական վատ ժառանգությունները արդյունք են փակված հանքերի, որոնք շարունակում են բացասաբար ազդել շրջակա միջավայրի և կից համայնքների վրա: Դրանք ներառում են լքված հանքավայրեր (որոնց սեփականատերը հայտնի է, սակայն տարբեր պատճառներով ի վիճակի չէ կամ չի ցանկանում կատարել անհրաժեշտ մաքրման աշխատանք), անհայտ տեղանքներ (սեփականատերը չի գտնվում):¹⁷ Ինչպես ցույց է տալիս ԱԱ օրինակը, լքված հանքավայրերի դիտարկումը հանքարդյունաբերության բացասական ժառանգության լայն կոնտեքստում հնարավորություն է տալիս նաև դիտարկել քաղաքականությանը վերաբերող լուծումներ:

Վիկտորիա (Ավստրալիա)

Տնտեսական կարգազման, աշխատանքի, տրանսպորտի և ռեսուրսների գործակալության Ընդերքի ռեսուրսների կարգավորման /ԸՌԿ/ բաժինը պատասխանատու է Վիկտորիայում վերականգման պարտատոմսերի սահմանման և վերանայման համար, ինչպես պահանջվում է 1990թ-ի Հանքարդյունաբերական ռեսուրսների (Կայուն կարգացում) ակտով (ՅՌԿԶ ակտ): ՅՌԿԶ ակտը հետախուզություն / հանքարդյունահանում իրականացնելու թույլտվություն ունեցող ընկերությունից պահանջում է վերականգնել հողատարածքները աշխատանքային պլանով, լիցենզիայի պայմաններով կամ աշխատանքային կանոններով հաստատված վերականգման պահանջներին համապատասխան:¹⁸ ՅՌԿԶ ակտը պահանջում է, որպեսզի վերականգման աշխատանքները իրականացվեն աստիճանաբար՝ շահագործման ողջ ընթացքում: Հանքարդյունահանման և ուսումնասիրության թույլտվությունները և աշխատանքային իրավասությունները նույնպես տրվում են ենթարկվելով մի շարք պայմանների, որոնք կարող են ընդգրկել վերականգման աշխատանքների մասին լրացուցիչ պայմաններ:

ՅՌԿԶ ակտը արդյունահանման ոլորտի իրավասության թույլտվություն ստացած ընկերությունից կամ հայտ ներկայացնողից պահանջում է վերականգման պարտատոմս ձեռք բերել այն գնով, որը կսահմանվի նախարարի կողմից: Վերականգման պարտատոմսի պայմանն այն է, որ լիազորությունը ստացողը իրականացնում է հողի վերականգնում ինչպես պահանջվում է ՅՌԿԶ ակտով: ԸՌԿ բաժինն ունի ոչ խտրական

¹⁷ Ավստրալիայում հայտնի են մոտավորապես 50,000 հանքարդյունաբերական ժառանգության տեղանքներ: Տես՝ <http://www.mpi.org.au/2015/11/a-sense-of-place-a-sense-of-loss-australias-mining-legacy/>.

¹⁸ Տես՝ http://www.energyandresources.vic.gov.au/data/assets/word_doc/0013/1213600/9252_DEDJTR_EERR_Code_of_Practice_for_Mineral_Exploration_accessible.doc: Կամ Արևելյան Ավստրալիայի աշխատանքային կանոնների համար տես՝ http://www.dmp.wa.gov.au/Documents/Safety/MSH_COP_MineralExplorationDrilling.pdf: Քուինզլենդի /Ավստրալիա/ աշխատանքային կանոնների համար տես՝ https://www.dnrm.qld.gov.au/data/assets/pdf_file/0005/240566/qld-guidance-note-exploration-safety.pdf:

մոտեցում հողի սեփականտիրության առումով և պահանջում է, որպեսզի պարտատոմսեր ներկայացվեն թե մասնավոր, թե պետական հողերի վրա իրականացվող շահագործման աշխատանքների համար: Թեև մասնավոր հողատարածքի վրա վերականգման աշխատանքների չափանիշները սկզբունքորեն հողի սեփականատերերի գործն են, կառավարության համապատասխան բաժինը ցանկանում է, որպեսզի բոլոր հողերը վեկանագնվեն պատշաճ չափանիշների համապատասխան (հանրային անվտանգության, առավել լայն շրջակա միջավայրի վրա հավանական ազդեցության նպատակով):

2014թ-ին ԸՌԿ բաժնի տրամադրած ուղեցույցները շահագործող ընկերություններին հնարավորություն են տալիս գնահատել վերականգման աշխատանքների իրենց պարտավորության չափը՝ կիրառելով վերականգման ստանդարտ վճարներ հասարակ գործողությունների համար և վերականգման պարտատոմսի հաշվիչ մյուս այլ գործողությունների համար:¹⁹Վերականգման պարտատոմսերը պարբերաբար վերանայվում են ԸՌԿ բաժնի կողմից, որպեսզի շահագործման ողջ ընթացքում պահպանվեն դրանց պատշաճ մակարդակները:Պարտատոմսը նաև վերանայվում է, երբ ներկայացվում է աշխատանքային պլանի փոփոխություն, կատարվել է տեղամասի փոխանցում կամ կատարվել է հարցում տեղամասը տնօրինողի կողմից:

Պարտատոմսի չափը հաշվարկվում է այնպես, որպեսզի ամբողջությամբ հնարավոր լինի հոգալ վերականգման պարտավորության ծախսերը՝ հիմնվելով հաստատված աշխատանքային պլանում նշված աշխատանքների վրա, իսկ աշխատանքային կանոնների շրջանակում գործող հասարակ գործողությունների կամ շահագործման աշխատանքների համար կատարելով հաշվարկ ըստ հեկտարի: Սկզբնական պարտատոմսի համար սա հիմնվում է մշակման առաջին փուլում տեղի ունեցող առավելագույն խախտման կետի վրա, ինչպես նշված է հաստատված աշխատանքային պլանում: Պարտատոմսերի պարբերական վերանայումների համար պարտատոմսը հաշվարկվում է վերանայման պահին գոյություն ունեցող վերականգման պարտավորության հիման վրա: Եվ սկզբնական պարտատոմսի, և պարբերական վերանայումների համար վերականգման պարտավորությունը հաշվարկվում է՝ հաշվի առնելով հողի վերջնական վերականգնման աշխատանքների իրականացումը ինչպես այն նշված է վերականգման պլանում:

1990թ-ի հանքարդյունաբերական ռեսուրսների կայուն պարզացման ակտը պահանջում է, որպեսզի թույլտվության կամ աշխատանքային իրավասության հայտ ներկայացնողը (կամ փոխանցվող իրավունքի ստացողը) գործակալությանը ներկայացնի պարտատոմս՝

¹⁹ Մանրամասն ուղեցույցների համար տես՝ <http://www.energyandresources.vic.gov.au/earth-resources-regulation/licensing-and-approvals/minerals/guidelines-and-codes-of-practice/establishment-and-management-of-rehabilitation-bonds-for-the-mining-and-extractives-industries>:

որպես տեղամասի վերականգնման առնչվող պայմանների ընդունման երաշխիք: ԸՌԿ բաժինը վերականգնման պարտատոմսերը ընդունում է միայն առանց պայմանների բանկային երաշխիքի տեսքով: Ֆինանսական անվտանգության այլ ձևերը, ինչպես օրինակ ապահովագրական կամ կանխիկ պարտատոմսերը, չեն ընդունվում:²⁰

Նոր հարավային Ուելս (Ավստրալիա)

Արդյունաբերության պետական գործակալության Ռեսուրսների և Էներգետիկայի բաժնի պատասխանատվության մեջ է մտնում ապահովել, որպեսզի հանքարդյունաբերական գործունեության արդյունքում խախտված հողատարածքները վերադարձվեն կայուն հետ-արդյունաբերական հողային օգտագործման: Բոլոր տեսակի լիազորությունների տրամադրման համար պահանջվում է կատարել անվտանգության դեպոզիտ, որը կծածկի վերականգնման բոլոր ծախսերը: Կյս պահանջը ապահովում է, որպեսզի պետությունը չստանձնի ֆինանսական պարտավորություններ այն դեպքում, եթե համապատասխան լիազորություն ունեցող ընկերությունը չի կատարում վերականգնման աշխատանքների մասին իր պարտավորությունները:²¹

1992թ-ի Հանքարդյունաբերության ակտի շրջանակներում հանքարդյունահանման լիազորություն ունեցող ընկերությունը անվտանգության դեպոզիտի չափը որոշելու համար պարտավոր է ներկայացնել Վերականգնողական ծախսերի նախահաշիվ (ՎՃՆ): ՎՃՆ-ն կառավարության կողմից օգտագործվում է նշված դեպոզիտի չափը որոշելու համար:²² Վերականգնողական աշխատանքների ծախսի հաշվարկի գործիքը հնարավոր է դարձնում հաշվարկել անվտանգության դեպոզիտի չափը տեղամասի համար:²³ Լիազորություններ ունեցող ընկերություններից պահանջվում է ներկայացնել ՎՃՆ ամեն անգամ, երբ տեղի է ունենում վերականգնողական պարտավորությունների փոփոխություն: Ռեսուրսների և Էներգետիկայի բաժինն է որոշում, թե արդյոք կատարվել են վերականգնման մասին պարտավորությունները, որից հետո անվտանգության դեպոզիտը բաց է թողնվում: Դեպոզիտի մասնակի բացթողում կարող է տեղի ունենալ, երբ ցույց է տրվում հաջող վերականգնողական աշխատանք տեղամասի մի հատվածում միայն:

²⁰ Տես՝ <http://www.energyandresources.vic.gov.au/earth-resources-regulation/licensing-and-approvals/minerals/guidelines-and-codes-of-practice/establishment-and-management-of-rehabilitation-bonds-for-the-mining-and-extractives-industries>.

²¹ Տես՝ http://www.resourcesandenergy.nsw.gov.au/data/assets/pdf_file/0020/96104/EDP11-Policy-Rehabilitation-Security-Deposits.pdf.

²² Ուղեցույցների համար տես՝ http://www.resourcesandenergy.nsw.gov.au/data/assets/pdf_file/0006/363516/ESG1-Rehabilitation-Cost-Estimate-Guidelines.PDF

²³ Սեղմեք այս հղման վրա Excel ֆորմատով ֆայլը բեռնելու համար http://www.resourcesandenergy.nsw.gov.au/data/assets/excel_doc/0008/427247/Rehabilitation-Cost-Calculation-Tool.xls

Հանքարդյունաբերական գործունեության պլանը /ՅԳՊ/ ՆՅՈւ կառավարության կողմից կիրառվող գործիք է, որը մշտադիտարկման է ենթարկում հանքարդյունաբերության և վերականգնողական գործողությունների առաջընթացը ողջ հանքավայրում: 2013թ-ի սեպտեմբերին ՆՅՈւ կառավարությունը հրապարակեց ՅԳՊ ուղեցույց, որը մանրամասն ներակայացնում է մշտադիտարկման և առաջընթացի կառավարման գործընթացը՝ հաջողված վերականգնողական արդյունքների հասնելու նպատակով: Ուղեցույցը պահանջում է հանքարդյունաբերական ոլորտից տրամադրել չափման ենթակա տվյալներ, որոնք կցուցադրեն, որ առաջարկվող վերականգնողական արդյունքները իրատեսական են և դրանց հնարավոր է հասնել տրված ժամանակահատվածում:²⁴

Ավելանում է այն իրավական համակարգերի թիվը, որտեղ քննարկում են կորպորատիվ «շղարշը» կոտրելու հնարավորությունը՝ նպատակ ունենալով հետապնդել այն բաժնետերերին, ովքեր թաքսվում են ընկերության սահմանափակ պատասխանատվության ետևում: Քունիզլանդում «Պատասխանատվության շղթա» կոչվող օրենսդրությամբ նախատեսված է նույնիսկ ավելի լայն ցանց՝ ընդգրկելով ցանկացած մեկին, ով օգտվում է հանքարդյունաբերական գործունեության իրականացումից: 1988 թվականի՝ «Քավության տարիքը» մենագրության մեջ²⁵ տնտեսական պատմաբան Բոյդ Յիլթոնը պարզաբանում է, թե 19-րդ դարի առաջին կեսին ավետարանական հոգևոր միտքն ինչպես զարկ տվեց ազատ շուկայական մոտեցումներին և խառնաշփոթ մտքրեց Վիկտորիանական շրջանի կապիտալիստական մրցակցության մեջ: Քաղաքական իշխանություն ունեցող ավետարանականները գտնում էին, որ այդ քաղաքականությունները Աստծո կամքի հաստատումն է շուկայում: Եթե ձախողես այդպիսի «չներող» շուկայում, ապա պետք է հաշտվես մեղքերիդ հետ՝ ամբողջությամբ մարելով բոլոր պարտքերդ:²⁶ Սըր Վալտեր Սթոթը, ինչպես հայտնի է, տարիներ շարունակ իր մարում էր պարտաբերների պարտքերը, որոնք ձևավորվել էին բիզնես ձեռնարկի ձախողման արդյունքում:

1850-ականներին էր, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ի հայտ գալով շուկան և համապատասխան տնտեսական քաղաքականությունը դարձան

²⁴ Stu՝ http://www.resourcesandenergy.nsw.gov.au/data/assets/pdf_file/0007/527911/ESG3-Mining-Operations-Plan-MOP-Guidelines-September-2013.pdf

²⁵ AJB Hilton, The Age of Atonement: The Influence of Evangelicalism on Social and Economic Thought, 1795 – 1865, Oxford: Clarendon Press 1988, pages 3-5/ ԷյՋեյԲի Յիլտոն, Քավության տարիքը. Ավետարանականության ազդեցությունը սոցիալական և տնտեսական մտքի վրա, 1795-1865, Օքսֆորդ, Քլարենդոն Պրես, 1988թ. էջ՝ 3-5:

²⁶ Ibid, 257-րդ կետ. պահպանողական Լորդ Էլսոնն ասում էր. «որ յուրաքանչյուր մարդ, ով ներդրում է կատարում որևէ ձեռնարկում, որից ահռելի շահաբաժիններ է ակնկալում, պարտադիր պետք է պատրաստ լինի նաև վճարելու ընկերության պարտքերը՝ ձախողման պարագայում, իր վերջին շիփնգով և ակրով»: Նրա լիբերալ և ծայրահեղ պահպանողական կոլեգաները «ամբողջությամբ «ստորագրեցին» այդ կոշտ տեսակետի տակ, որն ամրագրված է Վաֆն՝ ընդդեմ Քարվերի, 1793 թվականի հայտնի դատավճռում, նշելով, որ «նա, ով զգում է օգուտը, պետք է կրի նաև բեռը»:

առավել «ներող»: Կրոնական մտքում տեղ գտած փոփոխությունը, այն է՝ անցումը քավությունից մարմնավորման, ստեղծեց մի իրավիճակ, երբ նորովի շեշտադրվեց Աստծո սերը, այլ ոչ՝ քավության առավել պատժողական պահանջները: Քաղաքականության մեջ տեղ գտած փոփոխությունը՝ ի նպաստ սահմանափակ պատասխանատվության, կարելի էր տեսնել ինչպես կառավարության միջամտություններում, որոնք ուղղված էին ինդուստրացման վատագույն ներգործությունների շտկմանը, այնպես էլ այն անձանց կրոնական մտածողության մեջ, ովքեր աստիճանաբար սկսեցին տեսնել այդպիսի միջամտությունների անհրաժեշտությունը: Քավությունը իր տեղը զիջեց մարմնավորմանը, լիբերալ միջամտությանը և լիարժեք անձնական պատասխանատվության փոխարեն՝ սահմանափակ պատասխանատվությանը:

Չնարավոր է, որ կրկին վերականգնվի համատեղ ձեռնարկության գործունեության համար ուղղակի անձնական պատասխանատվությունը: Քուինզլանդում (Ավստրալիա), *Շրջակա միջավայրի պաշտպանության (պատասխանատվության շղթայի) մասին օրենքի 2016թ.-ի փոփոխությամբ (Qld)* ընկերությունների խումբը կամ նշանակալի ներդրողները պատասխանատվություն են կրում այն ընկերության համար, որն ի վիճակի չէ կատարելու բնապահպանական օրենսդրության պահանջները: Եթե ընկերությունը դիմում է սնանկության կամ լուծարման, անկախ պատճառից, ապա լայն սահմանված խմբում ընդգրկված մյուս ընկերությունները, ինչպես նաև նշանակալի ներդրում կատարած անձինք, ովքեր ի սկզբանե օգտվել են ընկերության հանքարդյունաբերական գործունեությունից, կարող են հետապնդվել Կառավարության կողմից, որպեսզի կատարեն բնապահպանական չկատարված պարտավորությունները: Խնդիրն, անշուշտ, հարկ վճարողներին պաշտպանելն է այն ընկերություններից, որոնք խուսափում են շրջակա միջավայրը մաքրելու իրենց պարտականություններից:

Այս օրենսդրությունը կարող է հետաքրքրական լինել այլ իրավական համակարգերի համար ևս: Եվ դա ունի առնվազն երեք պատճառ: Առաջինը՝ «կանաչ քվեները» քաղաքական ծանր կշիռ են ձեռք բերում՝ պայմանավորված ոչ միայն խոշոր կուսակցությունների նախապատվությունների բաշխվածությամբ (այն քաղաքական համակարգերում, որտեղ կիրառվում է ռեյտինգային քվեարկություն), այլ նաև կլիմայի փոփոխությամբ և նշանակալի գլոբալ էկոլոգիական այլ հարցերով, որոնք ինքնին ավելի ու ավելի մեծ հնչեղություն են ստանում: Խոշոր կուսակցությունները, հնարավոր է, փորձեն ստանալ այդ քվեները, որպեսզի ամրապնդեն իրենց ընտրական դիրքը, կամ որովհետև այս կարևոր էկոլոգիական հարցերի վերաբերյալ իրենց քաղաքականության մեջ փոփոխություն են կատարել ու հաշվի են առել հանրության մտահոգությունները: Այս նպատակով, կարևոր է նկատել, որ Քուինզլանդի այս օրենսդրությունը ստացել է Քուինզլանդ նահանգի օրենսդիր ժողովի խոշոր կուսակցությունների աջակցությունը (Քուինզլանդն ունի միապալատ օրենսդիր մարմին): Երկրորդ՝ Ավստրալիայի պետական

բյուջեն «ճնշման» տակ է, մասնավորապես ռեսուրսահեն և էներգահեն նահանգներում (դրանք են հատկապես՝ Արևմտյան Ավստրալիան և Քուինսլանդը), ինչը պայմանավորված է այդ արտադրատեսակների գների անկմամբ և, ըստ այդմ, ռոյալթիներից ստացվող եկամուտների նվազմամբ: Ըստ ամենայնի, կողջունվի լքված հանքերի ֆինանսավորման ցանկացած միջոց, որը բեռ չի լինի հարկ վճարողների համար:

Երրորդ՝ Ավստրալիայում նման օրենսդրությունը շատ դժվար է վիճարկել սահմանադրության հիման վրա:²⁷ Նահանգներն ինքնիշխան կառավարություններ են՝ ֆեդերալ համակարգում: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր ամրագրված սահմանադրությունը, որը թույլ է տալիս օրենսդրական ակտեր ընդունել տվյալ նահանգի «խաղաղության, կարգուկանոնի և պատշաճ կառավարման» նպատակով: Եթե այդ օրենսդրական ակտերը չեն հակասում Դաշնության օրենսդրությանը՝ Դաշնային սահմանադրության 109-րդ կետի համաձայն, ապա յուրաքանչյուր նահանգում ընդունված օրենքները վավեր են և լիարժեք գործում են և ուժի մեջ են տվյալ նահանգում: Այսպիսի օրենսդրական ակտերը վիճարկելու առեղծվածի դժվարությունը ենթադրում է, որ որևէ գործունեությունից տուժած անձանց իրավական պաշտպանության միջոցները խիստ սահմանափակ են, բացի օրենսդրության խիստ լայն կատեգորիաների սահմանները և դրա ընդգրկման շրջանակը ստուգելու մասով բողոք բերելը: Հայաստանում շրջակա միջավայրին վերաբերող սահմանադրական դրույթների կարգավորման շրջանակը բավականին լայն է, ինչը թույլ է տալիս ներառել նաև կորպորատիվ շղարշը կոտրելու հիմնադրույթներ: ²⁸Բացի դրանից, Քուինսլանդում դատական կարգով վերանայման պարագայում չի թույլատրվում վերանայել գործի փաստական հանգամանքները. վերանայվում է միայն գործընթացը, որը հանգեցրել է տվյալ որոշման կայացմանը: Այսպիսով, եթե որոշումը պատշաճ կերպով չի ընդունվել, ապա որոշումը կայացրած մարմինը պարզապես հետևում է դատարանի հիմնավորումներին և նորից է որոշում կայացնում:

Շատ իրավական համակարգերում բավականին երկար ժամանակ է. ինչ բնապահպանական օրենսդրությամբ սահմանված է պատասխանատու պաշտոնատար անձի պատասխանատվությունը:²⁹ «Պատասխանատու

²⁷ *Union Steamship Co of Australia Pty Ltd-ն ընդդեմ King-ի* (1988) 166 CLR, [16], մեծամասնությամբ որոշվել է, որ «խաղաղության, կարգուկանոնի և պատշաճ կառավարման համար» բառերը սահմանափակող բառեր չեն: Դրանք չեն վերագրում գաղութի դատարաններին, ճիշտ այնպես ինչպես չեն վերագրում Նահանգի դատարաններին, իրավասություն՝ չեղարկելու օրենսդրությունը այն հիմքով, թե դատարանի կարծիքով, տվյալ օրենսդրությունը չի խթանում կամ չի ապահովում տվյալ նահանգի խաղաղությունը կարգուկանոնը և պատշաճ կառավարումը:

²⁸ ՀՀ Սահմանադրություն, հոդված 11:

²⁹ Օրինակ, *Շրջակա միջավայրի պաշտպանության գործողությունների մասին օրենքի* 5.9-րդ հոդված *1997(NSW)*, 1999թ.-ի *Շրջակա միջավայրի պաշտպանության և կենսաբազմապատկանության պահպանման մասին օրենքի* 17-րդ մասի 18-րդ կետ(*Cth*), 1994թ.-ի *Շրջակա միջավայրի պաշտպանության մասին*

պաշտոնատար անձ» հասկացությունը, որպես կանոն, չի սահմանափակվում միայն տնօրենով, այլ ներառում է նաև գծային պատասխանատվություն ունեցող՝ բարձր օղակի ղեկավարներին: Եթե բնապահպանական մարմնի համաձայնությունը կամ թույլտվությունը ստացած ընկերությունը չի կարողանում կատարել թույլտվության պահանջներն ու պայմանները՝ անվճարունակության կամ այլ պատճառներով, ապա պատասխանատու պաշտոնատար անձինք կարող են դատական կարգով հետապնդվել այն բանի համար, որ չեն ապահովել, որպեսզի իրենց ղեկավարած ընկերությունը կատարի իր էկոլոգիական պարտավորությունները: Պատասխանատու պաշտոնատար անձինք սովորաբար ապահովվում են պաշտպանությամբ: Որպես կանոն, պաշտպանությունը կառուցվում է այն փաստարկի վրա, թե այդ պաշտոնյաները ողջամիտ քայլեր են ձեռնարկել ընկերության կողմից պահանջների չկատարումը կամ շեղումները թույլ չտալու համար՝ պատշաճ պաշտպանությամբ:

Սակայն, Ավստրալիայի Քուինզլանդ նահանգում, 2016 թվականի մարտի 15-ի դրությամբ, բնապահպանական պահանջների չկատարման համար պատասխանատուների շղթան էականորեն երկարեց:³⁰ Այս օրենսդրական ակտով ներդրվում է պատասխանատվության զգալիորեն ընդլայնված շրջանակ, որը տարածվում է ոչ միայն պատասխանատու պաշտոնատար անձանց վրա, այլ ավելի հեռուն է գնում: Այն տարածվում է այն անձանց վրա, ովքեր իրավունակ են էական ֆինանսական օգուտ ստանալու այն ընկերությունից, որը չի կատարել իր բնապահպանական պարտավորությունները, ինչպես նաև այն իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց վրա, ովքեր նախորդ երկու տարիներին եղել են այնպիսի դիրքում, որն ազդեցություն է ունեցել տվյալ ընկերության կողմից այդ բնապահպանական պարտավորությունների կատարման վրա: Սա վերաբերում է շինծու տնօրեններին, սովետային տնօրեններին և ցանկացած մեկին, ով ֆինանսավորում է տրամադրում կամ ներդրում է կատարում ընկերության մեջ, բացառությամբ «մայր և հայր» բաժնետերերի: Նաև՝ վերոնշյալ նպատակներով որևէ անձի փոխկապակցված անձ լինելու հանգամանքը որոշելու հարցում օրենսդրության կիրարկումն ապահովող մարմինն օժտված է մեծ հայեցողական իրավասությամբ: Մարմինը նաև իրավասու է որոշում կայացնելու՝ անդրադառնալ վեճի առարկա հանդիսացող ընկերության ունեցած օբյեկտների նախկին սեփականատերերի հետ փոխկապակցված անձանց: Ըստ այդմ, Օրենքն ունի որոշակի հետադարձ ուժ:

Եթե այսպիսի օրենսդրությունը տարածում գտնի աշխարհում, ապա այն կարող է հիմնարար բացասական հետևանքներ ունենալ ընդերքօգտագործման և նավթի

օրենքի 10-րդ Գլուխ, Մաս 2 (Qld), 1986թ.-ի Շրջակա միջավայրի պաշտպանության մասին օրենքի 118-րդ բաժին (WA):

³⁰ *Շրջակա միջավայրի պաշտպանության (պատասխանատվության շղթայի) մասին օրենքի փոփոխություն, 2016թ. (Qld)*:

արդյունահանման ոլորտում ներդրումների վրա: Հանքարդյունաբերական ծրագրերի՝ ռոլայթի ֆինանսավորումը հաճախ դրա կողմնակիցների կողմից ներկայացվում է որպես հանքարդյունաբերական գործունեություն լախաձեռնող ընկերության՝ ուղղակի բնապահպանական պարտավորություններից մեկ քայլի հանում: Ռոլայթի ֆինանսավորողներն այլևս այդքան հեշտությամբ չեն անի այդ պնդումը, եթե այսպիսի օրենսդրությունը համատարած դառնա: Հարկ կլինի, որպեսզի զգալի ներդրում կատարող «սպիտակ ասպետները», որոնք ծրագիրը փրկում են դեֆոլտից, նախքան ռիսկի դիմելը և ներդրում կատարելը ոչ միայն իրականացնեն ընկերության համապատասխանության ստուգում (due diligence), այլ նաև տեխնիկական գնահատում առ այն, թե տվյալ ընկերությունն ինչպես է կատարում բնապահպանական օրենսդրության պահանջները: Անհրաժեշտ է, որպեսզի բոլոր իրավախորհրդատուները անընդհատ հետևեն իրենց վերաբերող իրավական համակարգերում բնապահպանական քաղաքականության պատասխանատուների կողմից արվող հայտարարություններին, քանի որ հնարավոր է, որ աշխարհում կրկին փչի քավության նոր դարի սառը քամին: Օրինակ Հունգարիայում, արդեն իսկ, կորպորացիայի ֆինանսական միջոցների բացակայության կամ անվճարունակության պարագայում կարող են վճարման համար թիրախավորել բաժնետերերին, իսկ Իսպանիայում և Պորտուգալիայում՝ մայր ընկերություններին: Այսպիսի կարգավորումները կարող են տարածվել Եվրոպայում, իսկ Հայաստանը կարող է հետևել այդ օրինակին:

Եզրակցություններ և առաջարկություններ

Թեև Հայաստանի մոտեցումը հանքի փակման կարգավորումներին համապատասխանում է միջազգային չափանիշներին, իրականացման ընթացքում կարող են առաջանալ խնդիրներ, որոնք հիմնականում կապված են ֆինանսական երաշխիքների և փակումից հետո մշտադիտարկման պարտավորությունների հետ: Ներկայիս համակարգում գոյություն չունեն դրույթներ, որոնք ապահովում են բավարար միջոցների առկայություն ցանկացած պահի ամբողջական ռեկուլտիվացում և հանքի փակում իրականացնելու համար: Սա, ինչպես ցույց տրվեց վերևում, հանքավայրի ռեկուլտիվացման և փակման հարցում միջազգային լավագույն փորձի գլխավոր հիմունքներից է: Չկան նաև դրույթներ, որոնք թույլ են տալիս կատարել դրամային արժեքի փոփոխություններ փոխանակման կուրսի տատանումների և արժեզրկման պատճառով:

2015թ-ի ավարտին Հայաստանի Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի բալանսը կազմել է 2մլն ԱՄՆ դոլար՝ նախատեսված ներկայումս ծավալվող մետաղների հանքարդյունահանման գործունեության փակմանը հետևող վերականգնողական աշխատանքների համար: Թեև դրամագլխի հիմնումը ճիշտ մոտեցում է հետագա բնապահպանական ժառանգություններ կանխելու համար, որպես

դեպոզիտ տրամադրված գումարները բավարար չեն վերականգման աշխատանքների համար զգալի մեծության հանքերից գոնե մեկում: Համեմատության համար նշենք, որ համապատասխան ֆոնդը Շվեդիայում (որտեղ մետաղական հանքարդյունաբերության ոլորտը Հայաստանի ոլորտից մեծ է 4-5 անգամ) 2015թ-ի ավարտին ուներ 400մլն դոլարի արժեք, որը 200 անգամ մեծ է հայկական համապատասխան ֆոնդից: Շվեդիայում որպես դեպոզիտ տրամադրվող գումարներն ուղիղ կերպով կապված են ներկա պահին շահագործումը դադարեցնելու գնահատված ծախսերի հետ: Հայաստանում դրամագլխում գտնվող գումարը հանքի փակման ծախսի միայն մի մասն է կազմում: Սա հանգեցնում է ոչ պատշաճ պաշտպանվածության ժամկետից շուտ փակման դեպքում:³¹

Հանքի փակման ֆինանսական երաշխիքներին առնչվող կարգավորումը ենթադրում է բազմաթիվ ու բարդ խնդիրներ: Այն ֆինանսական տեխնիկական ֆորմալությունների միջոցով դժվարին հավասարակշռությունն է շրջակա միջավայրի բավարար պաշտպանվածության և օգտակար հանածոների արդյունահանումը չխոչընդոտելու միջև: Կառավարությունները կարող են ճկուն լինել ֆինանսական երաշխիքների մեխանիզմների առումով՝ այդպիսով թույլատրելով ընկերություններին հաշվի առնել կոնկրետ հանգամանքներ և կիրառել ամենածախսարդյունավետ գործիքները: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց տրվեց նախորդ օրինակներում, նրանք պետք է մշակեն ուղեցույցներ կամ նմուշներ, որպեսզի ապահովեն յուրաքանչյուր մեխանիզմի համապատասխանությունը նվազագույն պայմաններին: Իսկ ամենակարևորը անկախ ընտրված մեխանիզմից այն է, որ կանոնակարգող մարմինը պետք ապահովի երաշխիքի կիրարկելիությունն ու արդյունավետությունը անվճարունակության կամ սնանկության պարագայում:

Լավագույն փորձ ունեցող երկրները պահանջում են հանքի փակման պլանների պարբերական վերանայումներ, որպեսզի դրանք արդիական լինեն ծրագրի ողջ ընթացքում: Պլանները պետք է պարբերաբար թարմացվեն, որպեսզի արտացոլեն հանքում տեղի ունեցող փոփոխությունները, շահագործման պլանավորումը, բնապահպանական և սոցիալական պայմանները: Լավագույն փորձով տարածքներում հանքի վերջնական փակման պլանները պահանջվում են ներկայացնել արտադրության ավարտից հինգ տարի առաջ: Այս առումով երկու տարին Հայաստանի դեպքում շատ կարճ է: Համեմատության համար ասենք, որ Թուրքիայում գործող՝ հանքի փակման նորմերի պահանջ է հանքի փակման պլանը, որը պետք է մշակվի ՇՄԱԳ շրջանակներում, իսկ վերականգման պլանը պարտադիր չէ թարմացնել հանքի շահագործման ողջ ընթացքում: Թուրքիայում հանքի փակումն ավելի քիչ է վերաբերում

³¹ Համաշխարհային բանկ (2016թ.), [Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment](#), ապրիլ, էջ 80:

ընդերթօգտագործմանը հաջորդող փուլում հողօգտագործմանը, փոխարենը դա հիմնականում վերաբերում է հողի կայուն ձևի ապահովմանը ընդերթօգտագործմանը հաջորդող փուլում: Հանքի վերջնական փակման պլանները նաև պետք է ներառեն կոնկրետ մանրամասներ առ այն, թե ինչպես է իրականացվելու փակում և ինչպես է իրականացվելու մշտադիտարկում՝ ցույց տալու փակման հաջող աշխատանքները: Հանքի փակման պլանները մշտադիտարկման են ենթարկվում այնքան, մինչև տեղանքը ունենում է կայուն երկարաժամկետ արդյունք:³²

³² Ընդերթօգտագործման և մետաղների միջազգային խորհուրդ. Հանքի համալիր փակման պլանավորում. [Toolkithub.icmm.com/document/310](https://www.toolkithub.icmm.com/document/310)

Հայաստանի ամերիկյան համալսարան
Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն
Մարշալ Բադրամյան 40,
Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն
+374-60-612520
crm@aua.am
crm.aua.am

mlri.crm.aua.am

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության
կենտրոնի՝ Հանքարդյունաբերության
օրենսդրության բարեփոխման նախաձեռնությունը
(ՀՕԲՆ) ֆինանսավորվում է Թուֆենկյան
հիմնադրամի կողմից:

T U F E N K I A N

FOUNDATION